

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԵԹԻՍԿՈՊՈՍՆԵՐՈՒՆ ՎԵՐԱԴԱՐՁԸ Ս. ԷԶՄԻԱԾԻՆԵՆ

Երուսաղեմի Ս. Հակոբյանց միաբանության երեց անդամներեն պատրիարքական տեղապահ՝ տեր Եղիշե վարդապետ Տերտերյան, տեր Սուրբն վարդապետ Թիմանցյան և տեր Նորայր վարդապետ Պողարյան, եպիսկոպոսական աստիճան ընդունելու համար մեկնած էին Ս. Էջմիածինի, ընկերակցովթյամբ էջմիածնի պատվիրակներ՝ տեր Վահան արքեպիսկոպոս Կոստանդիանի և պրոֆ. Աշոտ Արքահայրանի, Ավելի քան երկու ու կես ամիսներու բացակայությունն մը վերջ, անոնք վերադարձան Ս. Աթոռ, երեքաբիթի, 21 օգոստոս 1951-ի առավան ժամը 10-ին։

Միաբանությունն ու ժողովուրդը, Պաղեստինի ժանոթ գետքերեն ասդին առաջին անգամ ըլլալով, շքեղ ու աննախընթաց ընդունելովթյամբ մը դիմավորեցին եպիսկոպոսական աստիճանով պակլած տեղապահ՝ ամենապատիվ Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը և տեր տեր Սուրբն և Նորայր եպիսկոպոսները։

Մինչև Կալանդի օդակայանը, որ տասը կիլոմետր հեռու կտոնվի քաղաքեն, դիմավորության գացած էին տեր Ռուբեն արքեպիսկոպոս Մանասյան և Ս. Աթոռու ավագ թարգման տեր Հայրիկ վարդապետ Ասլանյան, ինչպես նաև զանազան կազմակերպությանց և միությանց ներկայացուցիչներ, ազգայիններ և ժողովրդային հոծ բազմությունն մը։

Ժամը 9.15-ին օդանավոր հասավ Կալանդիա և ներկաները անձկագին կուպեին վայրկյան առաջ տեսնել սրբազնները։ Ի վերջո երկցան անոնք և ողջագուրվեցան իրենց հոգեոր եղբայրներուն հետ և ուղղվեցան դեպի ժողովուրդը։ Տեղապահ տեր Եղիշե արքեպիսկոպոս ողջունեց ձեռքով բոլոր բարեկարգությունները։

Ներկաները, որոնք առաջնորդվեցան դեպի սուրբ քաղաք։ Հակառակ իր հառաջացյալ տարիքին, ոչ մեկ տկարություն ցուց կուտար տեր Սուրբն եպիսկոպոս, իսկ նորաց եպիսկոպոսի լավ վիճակը զարմանք պատճառեց, որովհետև շատ չէր կրնար դիմանալ ձամբարդությանց։ Հայաստանի օդն ու ջուրը և Ս. Էջմիածնա օրհնությունը կարծեք ամեն տեսակետով ազդած էին անոնց վրա։

Եղ ահա ավելի քան քան ինքնաշարժերու շարքը ուղղվեցալ դեպի քաղաք։ Դամասկոսի գուր հասնելով կազմվեցալ թափորը։ Առջևն կքակեին բարապանները իրենց պաշտոնական (սըրմա) հագուստներով և իրենց ասաներով զգրացնելով գետինը, քաղաքապետական ոստիկաններ հսկողություն կկատարեին և ձամբա կրանային հետզհետե սովարացող բազմության, չին քաղաքին անշուրք փողոցները շատ նեղ կուպային շքախումբին հետևող թափորականներուն։ Վանական իշխանության կողմեն նախապես տրված հրահանգին համաձայն, ոչ մեկ ուրախության արտահայտություն, ճիշ, ծափահարություն, թագավորին սպանության հետևան քով։

Տակավ առ տակավ թափորը մոտեցավ հայոց վանքին։ Դավիթի բերդին առջև պատիկ հրապարակեն հաղիկ անցած, դիմավորության եկան օտար պատրիարքությանց և հարանվանությանց ներկայացուցիչները, ինչպես նաև պաշտոնական անձնավորություններ, որոնք միաբանության հետ ընդառաջ եկած էին։

Ապա թափորը շարունակեց իր ընթացքը դեպի Մայր Տաճար։

ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱԶԳԵՆ ԵԹԻՍԿՈՊՈՍԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Օգոստոս 10-ին, ովքրաթ օր, Բուրբեշ վերաբարձած է էջմիածիններ Ռումանահայ թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Պալճյան։ Նորին սրբազնությունը դիմավորելու համար Բիրնեսայի օդակայանը գացած են՝ դավանանքի նախարարության կողմեն և Ռումանաց, խորհրդականներ, հայ քահանաներ, թեմական խորհուրդի և Բուրբեշի թագավորական անդամներ և այլն և այլն։

Օդակայաններ սրբազնը առաջնորդված է եկեղեցի, ուղ եղած է պատճաճ ընդունելություն մը, ի ներկայության Ռումանական Օրթոդոքս Եկեղեցին պետ ժողուրդ պատ-

րիարքի կողմեն՝ պատրիարքական տեղապահ դոկտր։ Անտիմ եպիսկոպոսի, պատրիարքական խորհրդականնին դոկտր Պրեգայի, Ռումանական Օրթոդոքս Եկեղեցվոր ներկայացուցիչ Հայոց Պավելի, հայ քահանայից դասուն, թեմական խորհուրդի ամբողջ կազմին, Բուրբեշի թագականության և ուրիշ բազմաթիվ հայերուն։

Բարի գալուստի խոսքեր ըրած են նախ քահանայից դասուն կողմեն տեր Հովհաննես քարիպյան, թեմական խորհրդական կողմեն՝ փաստարան պարուն Տիգրան Մինաս, դոկտր։ Ն. Ֆրունձյան, ապա Ռումանիու պատրիարքին կողմեն՝ Անտիմ եպիսկոպոս

և Ռուս Օրթոդոքս Եկեղեցին կողմէ՝ Հայոց Պալեբ:

Բոլորին պատասխանած է Վաղքեն սրբազնութեանը Ռումանիան ի վեցով ան շնորհակալությունը Հայութեանը է նախ կառավարության և Հետո պատրիարքին, որու ներկայացուցիչն ինպատճ է Ամենայն Հայոց Վեհափառ Հայ-

բապեատին ովզույնները Հաղորդել Ռումանիութեարքին: Ապա Հայերեն լեզվով շարունակելով իր խոսքերը, Հաղորդած է նորին Ս. Օծովիան օքնությունները:

Հայ մշակույթի սրահին մեջ ալ տեղի ունեցած է բնդունելություն մը սրբազնին վերադարձին առթիվ:

ՀԱՅԵՐԸ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՄԵջ

Կալկաթայի մեջ լսւս աեսնող «Նոր Աղքար» պարբերաթերթին մեջ Միրզայան Ա. քահանա Հնդկաստանի, Պիրմաստանի և Ճապայի Հայոց 1950 թվականի ընդհանուր վեճակագրությունը Հայաստանիած է, զոր կուտանք ստորև իր շահեկանությանը Համար.

Կալկաթա ունի 200 տուն Հայ 915 բնակչությամբ, 506-ը այր և 409-ը կին, 3 եկեղեցի, 2 քահանա և 2 դպրոց:

Սուբարայա ունի 145 տուն Հայ 630 բնակչությամբ, 383-ը այր և 247-ը կին, 2 եկեղեցի, 1 քահանա և 1 դպրոց:

Ասանսոլ՝ 39 տուն 102 բնակչությամբ, 54-ը այր և 48-ը կին, առանց եկեղեցիի, առանց քահանայի և առանց դպրոցի:

Բոմբեյ՝ 25 տուն, 53 բնակիչ, 31-ը այր և

22-ը կին, 1 եկեղեցի, 1 քահանա, առանց դպրոցի:

Մադրաս՝ 8 տուն, 32 բնակիչ, 15-ը այր և 17-ը կին, նույնպես:

Դակլա՝ 43 տուն, 75 բնակիչ, 53-ը այր և 22-ը կին, նույնպես:

Մանգուն՝ 54 տուն, 138 բնակիչ, 72-ը այր և 66-ը կին, 2 եկեղեցի, առանց քահանայի և դպրոցի:

Մինզապոր՝ 6 տուն, 22 բնակիչ, 12-ը այր և 10-ը կին, 1 եկեղեցի, առանց քահանայի և դպրոցի:

Համագումար՝ 520 տուն, 1.967 բնակիչ, 1126-ը այր և 841-ը կին, 11 եկեղեցի, 6 քահանա և 3 դպրոց:

ՎՐԱՑԵՐԵՆ ԵՎ ՀԱՅԵՐԵՆ ԶԵՐԱԳՐԵՐ ՍԻՆԱՅԻ ԱՆԱՊԱՏՈՒՄ

Gérard Garitte անունով մի թեղիացի երիտասարդ արևելագետ, որը մասնակցել է Սինայի անապատի էքսպեդիցիային, Louvain-ի Համալսարանի պաշտոնագորի մեջ («Le Muséon», revue d'études orientales), Հատոր XIII, 1950 թ., էջ 119—121), հետեւալ ուշագրավ տեղեկությունն է տեղավորել Սինայի վանքում պահվող ձեռագրերի մասին,

Սինայի վանքն ունի 3.300 ձեռագրեր, որոնցից 2.289-ը՝ Հունարեն է, 520-ը՝ արաբերեն՝ 276-ը՝ ասորերեն, 41-ը՝ սլավոներեն, 6-ը՝ եթովպերեն, 98-ը՝ վրացերեն (որոնցից 8-ը անհետացել են) և № 87-ը, մեկ ձեռագիր՝ Հայերեն:

Այս տեղեկությունը վրացագետ և Հայագետ մեր գիտականների ուշագրությանն հնգ ներկայացնում:

